Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1460 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ (ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ) ԲՆՈՒՅԹ ԿՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներում աշխատողների կողմից կատարվող լրացուցիչ ծախսերի հատուցման (այսուհետ՝ հատուցում) գումարի վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով՝

1) դաշտային պայմաններում կատարվող աշխատանքներ են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնական աշխատանքի վայրից դուրս որոշակի՝ մինչև վեց ամիս ժամկետով կատարվող երկրաբանահետախուզական կամ սեյսմաբանական, կամ տեղագրագեոդեզիական, կամ նախագծահետազոտական, կամ արտակարգ իրավիճակների վերացման և մոնիթորինգի աշխատանքները, կամ հնագիտական, կամ հիգիենիկ, կամ համաճարակաբանական, կամ կենդանամակաբուծաբանական, կամ միջատաբանական, կամ գյուղատնտեսական, կամ բնապահպանական հետազոտությունը, կամ պատմության կամ մշակույթի անշարժ հուշարձանների վիճակի մասնագիտական ուսումնասիրությունն ու հետազոտությունը, կամ հնագիտական պեղումները, կամ գիտական արշավները, ինչպես նաև այլ աշխատանքներ, եթե դրանք իրականացվում են աշխա-

տավայրերի ու կենցաղի համար ոչ հարմար պայմաններում, ժամանակավորապես տեղակայված են բնակավայրերից դուրս.

2) տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքներ են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնական աշխատանքի վայրից դուրս աշխատողների աշխատավայրերի հաճախակի վերատեղաբաշխմամբ կատարվող էներգետիկայի կամ կապի, կամ ճանապարհաշինության, կամ խմելու, կամ ոռոգման ջրի համակարգերի սպասարկման աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ մշտապես ճանապարհին կատարվող ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտի սպասարկման այն աշխատանքները, որոնց տևողությունը գերազանցում է 12 ժամը, և փոխվում է այն օրացուցային օրը, որի ընթացքում աշխատողը մեկնել է հիմնական աշխատավայրից:

3. Աշխատողները դաշտային կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքների են մեկնում՝ համաձայն գործատուի ընդունած անհատական իրավական ակտի:

4. Դաշտային կամ տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքում հատուցման գումարը վճարվում է սույն կարգի 2-րդ կետով սահմանված աշխատանքներում ընդգրկված աշխատողներին՝ գործատուի կողմից հաստատված աշխատանքային ծրագրով նախատեսված առաջադրանքների կատարման համար աշխատողի կողմից կատարվող լրացուցիչ ծախսերը հատուցելու նպատակով:

5. Հատուցման գումարը վճարվում է դաշտային կամ տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների մեկնելուց առնվազն մեկ օր առաջ՝ մեկնելու օրվանից մինչև հիմնական աշխատանքի վայրը վերադառնալու բոլոր օրացուցային օրերի համար:

6. Այն դեպքում, երբ գործատուի անհատական իրավական ակտի համաձայն՝ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներում աշխատողը մեկ օրվա ընթաց-

քում գտնվում է մեկից ավելի երկրում (քաղաքում), ապա հատուցման գումարը վճարվում է այն երկրի (քաղաքի) օրապահիկի չափով, որն ավելի բարձր է:

7. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս (բացառությամբ Արցախի Հանրապետության) տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքների կատարման դեպքում աշխատողներին տրվող հատուցման գումարի հաշվարկները կատարվում են տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքների մեկնելու մասին գործատուի ընդունած անհատական իրավական ակտի ընդունման օրը, իսկ վերջնահաշվարկը՝ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներից հիմնական աշխատանքի վայր վերադառնալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով:

8. Դաշտային կամ տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների մեկնած աշխատողի ժամանակավոր անաշխատունակության դեպքում աշխատողը, համաձայն գործատուի ընդունած անհատական իրավական ակտի, հետ է կանչվում դաշտային կամ տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքներից, և աշխատողին ընդհանուր հիմունքներով վճարվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ:

9. Դաշտային կամ տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքներից ժամանակավոր անաշխատունակության, ինչպես նաև այլ դեպքերում սահմանված կարգով աշխատողին հետ կանչելու դեպքում՝ չաշխատած օրերի համար վճարված լրացուցիչ ծախսերի հատուցման գումարը չաշխատած օրերին համամասնորեն հետ է գանձվում հիմնական աշխատանքի վայրը վերադառնալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ